Օգնե՞ք ինչ-որ մեկին խնայելու մինչև $3.600 դե-ղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերի վրա

2008

Արդյո՞ք դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, որն օգնության կարիք ունի դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված ծախսերի հարցում:

Հիմա դուք կարող եք օգնել ինչ-որ մեկին, որի համար հոգ եք տանում՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերով ,Medicare-ի հավելյալ օգնության համար դիմելու հարցում: ,Medicare ունեցող ցանկացած ոք կարող է ստանալ դեղատոմսով բաց թողնվող դեղերի ,Medicare-ի ծածկույթ: Հավելյալ օգնությունը մատչելի է սահմանափակ եկամուտով որոշ մարդկանց համար: Այն վճարելու է բոլոր ամսական ապահովագրավճարները և տարեկան չապահովագրվող նվազագույները կամ դրանց մեծ մասը, նվազեցնելով իրենց պլանին վերաբերող դեղատոմսով բաց թաղնվող դեղերի հետ կապված համավճարումները: Հավելյալ օգնությունը կարող է տարեկան կազմել մինչև $3.600: Սահմանափակ եկամուտ և միջոցներ ունեցող բազում մարդիկ բավարարում են այս մեծ խնայողություններից օգտվելու պահանջներին, սակայն նույնիսկ չգիտեն դրա մասին: Ինչ-որ մեկի համապատասխանությունը որոշելու համար Սոցիալական ապահավությանը կպահանջվի իմանալ իրենց եկամուտը և իրենց խնայողությունների, ներդրումների և անշարժ գույքի (բացի տնից) արժեքը: Եթե նրանք ամուսնացած են և ապրում են իրենց ամուսնու (կնոջ) հետ, ապա մեզ պահանջվելու է տեղեկատվություն նրանց երկուսի մասին:

Հավելյալ օգնության համար պահանջներին բավարարելու համար նրանք պետք է ունենան.

- Անհատի համար՝ $15.600-ով կամ միասին ապրող ամուսնացած զույգի համար՝ $21.000-ով սահմանափակվող եկամուտ:
- Նույնիսկ եթե նրանց տարեկան եկամուտը ավելի բարձր է, այն մարդիկ, որոնց համար դուք հոգ եք տանում, կարող են որոշակի օգնություն ստանալ ամսական ապահովագրավճարների, տարեկան չապահովագրվող նվազագույների, դեղատոմսով բաց թողնվող դեղերի համար համավճարումների տեսքով: Որոշ օրինակները, որտեղ եկամուտը կարող է ավելի բարձր լինել, ընդգրկվում են, եթե նրանք կամ նրանց ամուսինը (կինը).
  - —Օգնում են ձեզ հետ ապրող ընտանիքի այլ անդամներին.
  - —Ունեն աշխատանքից առաջացող հասույթ կամ
  - —Ապրում են Ալասկայում կամ Հավայան կղզիներում և
- Անհատի համար՝ $11.990-ով կամ միասին ապրող ամուսնացած զույգի համար՝ $23.970-ով սահմանափակվող միջոցներ: Միջոցները ներ են առնում այնպիսի բաներ, ինչպիսիք են բանկային հաշիվները, բաժնետոմսերը և բոնդերը: Մեր կողմից որպես միջոցներ հաշվի **չեն** առնվում իրենց տունը և մեքենան:

Ընթացք տալը

Սոցիալական պահովությունը կարող է ձեզ տալ դիմում-հայտարարագիր, որը դուք կարող եք լրացնել՝ ,Medicare-ի նպաստառուներին հավելյալ օգնության համար դիմելու հարցում օգնելու նպատակով: Հաջորդ էջում զետեղված աշխատանքային աղյուսակը կարող է ձեզ օգնել՝ հավելյալ օգնության համար դիմելու հարցում իրենց օժանդակելու գործում: Աշխատանքային աղյուսակը դիմում-հայտարարագիր **չէ**:

Խնդրե՞ք նրանց, ում օգնում եք, որպեսզի.

- Բացահայտեն իրենց միանձնյա, ամուսնու (կնոջ) կամ այլ անձի հետ համատեղ սեփականությունը հանդիսացող իրերը: Նրանք **չպետք է** ընդգրկեն իրենց տունը, տրանսպորտային միջոցները, գերեզմանատեղերը կամ անձնական սեփականությունը:
- Վերանայեն իրենց ամբողջ եկամուտը:
- Ժամանակ խնայելու նպատակով վաղօրոք հավաքեն իրենց հաշվառման փաստաթղթերը:

Փաստաթղթեր, որոնք ձեզ օգնելու են ձեր կողմից օգնություն ստացող անձին վաղօրոք նախապատրաստել

- Հաշվեցուցակներ, որոնք ցույց են տալիս իրենց հաշիվների մնացորդները բանկերում, վարկային միություններում կամ ֆինանսական այլ հաստատություններում.
- Քաղվածքներ ներդրումների մասին.
- Քաղվածքներ կյանքի ապահովագրության վկայականներից.
- Բաժնետոմսեր.
- Հարկային հայտարարագրեր.
- Գրություններ կենսաթոշակ նշանակելու մասին և
- Վճարման ցուցակների կտրոններ:

Պետական գերատեսչությունները կարող են ձեզ օգնել ,Medicare-ի հետ կապված ծախսերի հարցում

,Medicare-ի խնայողական ծրագրերը օգնում են սահմանափակ եկամուտ և միջոցներ ունեցող մարդկանց հոգալու իրենց ,Medicare-ի ծախսերը: Եթե այն անձը, ում օգնում եք, վճարում է ապահովագրավճարներ ,Medicare-ի Մաս A-ով, ապա դրանք իր փոխարեն կարող են վճարվել ,Medicare-ի խնայողական ծրագրերով: ,Medicare-ի խնայողական ծրագրերից ստացվող օգնությունը կարող է նրանց համար տնտեսել տարեկան $1.100-ից ավելի:

Եթե դուք կարծում եք, որ նրանք իրենց նահանգից կարող են օգտվել ,Medicare-ի ծախսերի հարցում կամ եթե դուք համոզված չեք, ապա զանգահարե՛ք իրենց նահանգի բժշկական օգնության (,Medicaid-ն) գրասենյակ կամ զանգահարե՛ք՝ **1-800-MEDICARE (1-800-633-4227)**: TTY օգտագործողները պետք է զանգահարեն **1-877-486-2048**:

Միջոցները	Արժեքը
Բանկային հաշիվներ, ներառյալ չեկային, խնայողական և ավանդային վկայագրերը	$ _____
Բաժնետոմսեր, պարտատոմսեր, փոխադարձ ֆոնդեր, խնայողական պարտատոմսեր, անհատական կենսաթոշակային հաշիվներ (IRA-ներ) կամ այլ ներդրումներ	$ _____
Տանը կամ այլուր պահվող կանխիկ դրամ	$ _____
Կյանքի ապահովագրության վկայականներ դիմողի համար (և ամուսնու (կնոջ) համար՝ եթե ամուսնացած են և ապրում եք միասին)	$ _____
ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Սոցիալական ապահովությանը անհրաժեշտ է իմանալ,* ***թե որքան գումար կստանար դիմողը կամ նրա կինը (ամուսինը), եթե նրանք կյանքի ապահովագրության վկայականով գումարը ստանային այսօր:*** *Կանխիկ գումարի ճշգրիտ չափը ճշտե՛ք ձեր ապահովագրական ընկերության կամ գործակալի հետ: Այն հավանաբար կլինի նվազ, քան այն գումարն է, որի համար նրանք ապահովագրված են:*	
Ցանկացած այլ անշարժ գույք, բացի ձեր տնից	$ _____

Եկամուտը	Ամսական գումարը
Սոցիալական ապահովության նպաստներ	$ _____
Երկաթգծի աշխատողների ծերության նպաստներ	$ _____
Վետերաններին վճարվող նպաստներ	$ _____
Այլ կենսաթոշակներ կամ տարեկան ռենտաներ	$ _____
Ալիմենտներ	$ _____
Վարձակալական զուտ եկամուտ	$ _____
Բանվորական փոխհատուցում	$ _____
Այլ եկամուտ	$ _____
Այլ մարդկանց կողմից ցուցաբերվող օգնություն՝ տնային տնտեսության, ինչպես օրինակ. պարենի, գրավի, ջեռուցման վառելիքի կամ գազի, էլեկտրականության, ջրի հետ կապված ծախսերը և գույքահարկերը վճարելու համար	$ _____

	Տարեկան եկամուտը
Աշխատավարձ	$ _____
Ինքնաշխատությունից առաջացած զուտ եկամուտ	$ _____

Օգնե՛ք ինչ-որ մեկին խնայելու մինչև $3.600 դե-ղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերի վրա

Դուք ինչպե՞ս կարող եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ ծախսերի ,Medicare-ի պլանի մասին լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՛ք՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարե՛ք Սոցիալական ապահովությանը՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**):

Դուք կարող եք օգնել ինչ-որ մեկին հավելյալ օգնության համար ***www.socialsecurity.gov***-ում առցանց դիմելու հարցում: Հեռախոսով դիմելու կամ դիմում-հայտարարագիր ստանալու համար զանգահարե՛ք Սոցիալական ապահովությանը՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**), խնդրելով «Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ «Medicare-ի պլանի գներով օգնություն ստանալու դիմում-հայտարարագիր»-ը (SSA-1020): Սոցիալական ապահովության ներկայացուցիչները պատրաստ են ձեզ օգնել դիմում-հայտարարագիրը լրացնելու հարցում:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ ,Medicare-ի պլանի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք՝ ***www.medicare.gov*** կամ զանգահարե՛ք՝ **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**. TTY **1-877-486-2048**): ,Medicare-ը կարող է ձեզ տեղեկացնել նաև ձեր տարածքում գործող գերատեսչությունների մասին, որոնք ձեզ կարող են օգնել դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ ,Medicare-ի պլանների հարցում:

Social Security Administration
SSA Publication No. 05-10505-AM
(Help Someone Save Up To $3,600 On Prescription Drug Costs)
August 2008